

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՌԻԹՅԱՆ ԱՄՏՈՒԹՅՈՒՆ

Համագործակցության եռակի արդյունքները Ջուր խնայելու նոր տեխնոլոգիաների կիրառում, վերապատրաստման դասընթացին մասնակցություն և վարկի ստացում

Ավշար գյուղի ֆերմեր Հարություն Հովհաննիսյանը նոր տեխնոլոգիաների կիրառման երկար տարիների փորձ ունի: Դեռևս **1996** թ-ին ԷյՍԻԴիԱյ/ՎՕԿԱ-ի իրականացրած մեկ այլ ծրագրի շրջանակներում նրա տնամերձ հողամասում կառուցվել է արևային շորանոց՝ պոմիդորի չրի արտադրության համար: «Ջրից դեպի շուկա» ծրագրով **2008** թ-ին Հարությունի ջերմոցը դարձել է ցուցադրական տեղամաս: Նա, մասնակցելով վերապատրաստման դասընթացին, հարստացրել է իր գիտելիքները և հմտությունները ոռոգման ջրի կառավարման ոլորտում եւ հաջողությամբ դիմել ծրագրի շրջանակներում տրվող վարկի:

Հողագործությունը Հարություն Հովհաննիսյանի ընտանեկան զբաղմունքն է: Ծնողները, քույրը, եղբայրը մասնագիտությամբ գյուղատնտեսներ են: **1985** թ-ից զբաղվում են ջերմատներում բանջարեղենի արտադրությամբ, սակայն լիովին գիտակցում են, որ ժամանակի մարտահրավերներին և պահանջներին բավարարելու համար պետք է անընդհատ սովորեն ու բարելավեն իրենց ունեցած գիտելիքները:



Նախկինում օգտագործվող մակերեսային ոռոգում:

«Կաթիլային ոռոգման համակարգը շատ արդյունավետ և հեշտ տիրապետելի է: Ոռոգման ժամանակ կատարվող օժանդակ միջոցառումներն այս համակարգի դեպքում ավելի հեշտ է կատարել»:

Հարություն Հովհաննիսյան,
Ավշար գյուղի ֆերմեր



Կաթիլային ոռոգման համակարգ, որը լավագույն օրինակ է ծառայում հարևան ֆերմերների համար:

Հարություն Հովհաննիսյանը, լսելով Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանի «Ջրից դեպի շուկա» ծրագրի մասին, որն իրականացնում է ԷյՄԻԴԻԱյ/ՎՕԿԱ կազմակերպությունը, ցանկություն հայտնեց համագործակցել վերջինիս հետ: Համատեղ աշխատանքը սկսվել է 2008 թ. ապրիլ ամսին՝ ցուցադրական տեղամասի հիմնումից: Հարությունը ջերմատունը զբաղեցնում է 3000մ² տարածք, որի մի մասի՝ 1500մ² վրա ծրագրի ՏՋրի ներտնտեսային կառավարում / բաղադրիչը տեղադրել է կաթիլային ոռոգման համակարգ: Նույն բաղադրիչի անձնակազմի խորհրդով Հարությունը ոռոգման հետ միաժամանակ կատարում է նաև սնուցումը, քանի որ այս դեպքում սնուցումն ավելի արդյունավետ է: Արդյունավետության տեսակետից այն ոչ միայն հեշտ կառավարելի է, այլև խնայողական: Կաթիլային ոռոգման ժամանակ օգտագործվում է քիչ ջուր, և միևնույն տարածքը ոռոգվում է կարճ ժամանակահատվածում: Որպես ցուցադրության մի մաս՝ Հարությունին տրամադրվել է նաև հողի խոնավության 2 տվիչ, 1 չափիչ և 2 տենզիոմետր ոռոգումն ավելի արդյունավետ պլանավորելու համար:

Գիտելիք և նորագույն տեխնոլոգիաներ

ՏՋրի ներտնտեսային կառավարում / բաղադրիչի խորհրդով Հարությունը մասնակցել է նաև վերապատրաստման դասընթացին՝ այդ ոլորտում ունեցած իր գիտելիքները և հմտությունները հարստացնելու համար: «Ցանկացած դասընթաց փորձի փոխանակման, այլ ֆերմերների հետ շփվելու, կապեր հաստատելու հնարավորություն է ստեղծում», - մեջբերում է Հարությունը:



Ոռոգման ճիշտ պլանավորման համար նախատեսված տենզիոմետր:



Ջեռուցման համակարգ, որը ձեռք է բերվել վարկի միջոցներով:

Ոռոգման համակարգի խողովակներ:

Վերապատրաստման ժամանակ ձեռք բերած գիտելիքների և սեփական փորձի վրա հիմնվելով՝ նա դիմել է «Ֆարմ կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպությանը՝ ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկ ստանալու համար: 8.5 միլիոն դրամ արժողությամբ վարկն օգտագործվել է ջերմատան 1500մ² տարածքում կաթիլային ոռոգման համակարգ տեղադրելու, ջերմատանը ջեռուցման համակարգ տեղադրելու և 1.2 հա խաղողի այգի հիմնելու համար: Վարկը տրվել է 6 տարի ժամկետով և 6.9 տոկոսադրույքով: Վարկի մարման գրաֆիկը կազմվել է ֆերմայի կանխիկի հոսքի հիման վրա: Նա գոհ է «Ֆարմ կրեդիտ Արմենիա»-ի մատուցած ծառայություններից և վարկի պայմաններից:

ԷյՄԻԴԻԱյ/ՎՕԿԱ-ի աջակցությամբ ջերմատան 1500մ² վրա տեղադրվել է կաթիլային ոռոգման համակարգ, տրամադրվել է հողի խոնավության 2 տվիչ, 1 չափիչ և 2 տենզիոմետր:

«Ֆարմ կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպությունը 6 տարի ժամկետով և 6.9 տոկոսադրույքով 8.5 միլիոն դրամ արժողությամբ վարկ է տրամադրել Հարություն Հովհաննիսյանին՝ ջերմատան մյուս 1500մ² տարածքում կաթիլային ոռոգման համակարգ և ջերմատանը ջեռուցման համակարգ տեղադրելու, ինչպես նաև 1.2 հա խաղողի այգի հիմնելու համար:

«Եթե նախկինում կիրառվող մակերեսային ոռոգման ժամանակ ոռոգումը տևում էր 8-9 ժամ, ապա այժմ այն տևում է ընդամենը 1,5-2 ժամ և օգտագործվում է 3 անգամ քիչ ջուր: Երբ սեզոնի վերջում ոռոգման ջրի վարձը 3 անգամ ավելի քիչ է լինում, ակնհայտ է դառնում ոռոգման այս համակարգի արդյունավետությունը»
 Հարություն Հովհաննիսյան, Ավշար գյուղի ֆերմեր